

# ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ XVIII Դ՝ ՆՈՒՅՆԱՆԻՇՆԵՐԻ ՁԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ

### ՆԱԶԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Միջնադարյան Հայաստանում ամենատարբեր գիտությունների վերաբերյալ գրված կամ թարգմանված աշխատություններում, այլևայլ ստեղծագործություններում հանդիպող անհասկանալի բառերի մեկնություններն ու բացատրությունները սկզբնապես կցվել են բնագրերին<sup>1</sup>: Հետագայում ստեղծվել են բացատրական, ուղղագրական, թարգմանական, մասնագիտական բառարաններ, որոնք, սակայն, ինչպես վկայում են հետազոտողները, լինելով փոքրածավալ, չեն արտացոլել լեզվի բառային ամբողջ կազմը: Այդուհանդերձ, դրանք անչափ կարևոր են եղել գիտությանը ծառայելու, ուսումնական գործին նպաստելու առումներով: Այդ է վկայում նաև XII-XVII դդ. ավանդված «Հանդես բանաստեղծաց փաղանունաբար ստորոգիլ նորավարժիցն սակս» ձեռագիր բառարանների (այսուհետև՝ ՁԲ) վերնագիրը, այսինքն՝ նորավարժների, դեռակիրթների, աշակերտների խոսքը կատարելագործելու, ինչպես նաև բառապաշարը հարստացնելու ձեռնարկ<sup>2</sup>: Գ. Գասպարյանի կարծիքով էլ այս բառարանը «...հոմանիշների հարուստ աղբյուր է ծառայել միջնադարի հայ դպրոցների... համար»<sup>3</sup>: Բառարանի գործնական բնույթով են պայմանավորված ՁԲ-ներում առկա ծանոթություններն ու հղումները «եթէ պիտոյ իցէ», «եթէ պիտոյ իցէ դնի ևս», «եթէ պիտոյ իցէ տե՛ս», «եթէ յարմար իցէ բանին... դիր ևս...» և այլն:

Ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ) ձեռագրացուցակների<sup>4</sup> XVIII դ. ավանդված ձեռագրերում արդեն հանդիպում են «Նշանաքումն<sup>5</sup> նոյնանշան բառից ըստ դասաւորութեան մերոց տառիս» խորագրով ՁԲ-ներ<sup>6</sup>: Ուստի կարելի է հավանական հա-

<sup>1</sup> Տե՛ս **Հ. Ամայան**, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (X-XV դդ.), Եր., 1966, էջ 22:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 130, 132:

<sup>3</sup> **Գ. Գասպարյան**, Հայ բառարանագրության պատմություն, Եր., 1968, էջ 36:

<sup>4</sup> Տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մ.Մաշտոցի անվան Մատենադարանի», հհ. Ա-Բ, Եր., 1965-1970:

<sup>5</sup> Հոդվածում պահպանված է ձեռագիր բառարանների ուղղագրությունը:

<sup>6</sup> Տե՛ս «Նշանաքումն նոյնանշան բառից ըստ դասաւորութեանց մերոց տառիս» (ՄՄ 566, 234բ-279ա), «Հաւաքումն բառից որք նշանակութեամբ նոյն կամ մերձաւորք են Մատթեոսի վ. Բառգիրք հոմանիշ բառից» (ՄՄ 3110, 75ա-112ա), «Բառք նոյնանշանք ժողովեալք ըստ այբուբենից, ի մխիթարեան Մատթեոսի գերերջանիկ վարդապետե» (ՄՄ

մարել, որ հոմանիշ (փաղանուն) և նույնանիշ եզրերը տարբերակվում են հենց այս դարից: Հարկ է, թերևս, ճշտել, որ «նոյնանշան բառ»-ը առաջինը կիրառել է Մխիթար Մեփաստացին (1676-1749թթ.) «Բառգիրք յաշխարհաբար է ի գրաբառն նոյնանշան բառից յարադրութեամբ» աշխատության մեջ (այն հրատարակվել է Մ. Մեփաստացու մահից հետո՝ 1769 թ.), թեև ըստ «Լեզվաբանական բառարանի»՝ «նոյնանշան բառեր» «տերմինի առաջին անգամ (կամ համեմատաբար վաղ) գործածողը»<sup>7</sup> Գ. Ավետիքյանն է (1750-1827 թթ.):

Նույնանիշների՝ XVIII դ. ավանդված ձեռագիր բառարաններում մի քանի նույնանիշային շարքեր (այսուհետև՝ ՆՇ) եզրափակվում են հայերենի բարբառներում և խոսակցական լեզվում հնչյունական տարբերակներով առկա բառերով:

Հ. Աճառյանը աշխարհաբարի առաջին նմուշներում («ԺԷ դ.») արձանագրում է երկու հատկություն՝ «գրաբարի առատ խառնուրդ» և «տեղական բարբառների կնիք»՝ նշելով՝ «... այնպես որ կարելի է ասել, որ ամեն մի գավառ ունի իր տեղական առանձին աշխարհաբարը, որ գրողի գիտության համեմատ մոտենում կամ հեռանում է գրաբարից»<sup>8</sup>: Հ. Աճառյանի դիտարկումներով՝ «ԺԸ դարում շարունակվում է դեռ այս ուճը»<sup>9</sup>: Լեզվաբանները նաև այն կարծիքն են հայտնում, որ XVII դ. «գոյություն չունեղ գրական-կանոնացված լեզու, որի նկատմամբ .... բառերը դիտվեին բարբառային»<sup>10</sup>: Նկատի առնելով նշվածը, այդուամենայնիվ, քննվող ձեռագիր բառարաններում հանդիպող համանման բառերը սույն հոդվածում պայմանականորեն դիտարկվում են իբրև բարբառային իրողություններ, քանի որ թեև «... մի չգրված օրենք է եղել նախատիպ ձեռագրին հարազատ մնալը»<sup>11</sup>, այնուհանդերձ ընդօրինակողները միջամտել են ձեռագրին, արտագրել են՝ հավելելով բառեր՝ ըստ լեզվին տիրապետելու մակարդակի: Հետևաբար չպետք է բացառել ընդօրինակողի ապրած միջավայրի լեզվի ազդեցությունը: Եվ քանի որ ՁԲ-ների ընդօրինակումների քարտեզն ընդգրկուն է, դրանցում նույնպես հանդիպում են բառերի հնչյունական տարբերակներ: Բարբառային բառերի պարագայում կարևոր և հետաքրքրական է պարզել դրանց գոյությունը այս կամ այն բարբառում: ՁԲ-ներում արձանագրված նմանատիպ բա-

873 և 775, համապատասխանաբար՝ 185ա -220բ և 53ա-80ա): Նշվածներին հարկ է հավելել նաև ՄՄ 6762 ձեռագրում զետեղված անխորագիր բառարանը (101ա-130բ), քանի որ ձեռագրերի համեմատությունից պարզվում է, որ վերջինս և ՄՄ 566-ինը որոշ տարբերություններով հանդերձ նույնն են:

<sup>7</sup> Հ. Պետրոսյան, Մ. Գալստյան, Թ. Ղարազոյսյան, Լեզվաբանական բառարան, Եր., 1975, էջ VI, 239:

<sup>8</sup> Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Մաս 2, Եր., 1951, էջ 445:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 452:

<sup>10</sup> Լ. Հովհաննիսյան, XVII դարի գրաբարը, «Լեզվի և ոճի հարցեր», VII, Եր., 1983, էջ 154-155:

<sup>11</sup> Լ. Հովհաննիսյան, Բառային տարբերակներ V դարի գրաբարում, «Հայոց լեզվի պատմության հարցեր», 3, Եր., 1991, էջ 8-9:

ներն առկա են հայերենի բարբառների մեծ մասում. կան նաև միայն առանձին բարբառներում և խոսվածքներում գործածվող բառեր: Եվ ուրեմն հարկ է վերն ասվածը հաստատել որոշակի օրինակներով:

### Խզարել

Գրաբարի տպագիր բառարանները *պատառել* բառն արձանագրում են «պատառ պատառ կոտորել, բեկանել. հերձուլ, ցելուլ, ճեղքել, յօշել, գիշատել. խզել... եթէ հատմամբ, և եթէ բացմամբ ծերպից» «պատռել, ճեղքել, կտրել, բանալ» նշանակություններով<sup>12</sup>: *Պատառել*-ի իմաստների նույն տարբերակումն առկա է արդի հայերենի բացատրական բառարաններում՝ «1. Պատռել, ճղել, պատառների բաժանել» և «3. ճեղքել, ճղել (հարվածելով)...»<sup>13</sup>: Այնպես որ միանգամայն բացատրելի է *պատառել. խզել. հերձել. ցելուլ. յերկուս ծուէնս բաժանել. ծուատել* ՆՇ-ում (ՄՄ 566, 267բ. 775, 72բ. 873, 211ա. 3110, 105բ. 6762, 122բ)<sup>14</sup> *խզարել*-ի և *ծիւ ծիւ անել*-ի առկայությունը: *Խիզարել* բայը քաղելով եկեղեցական երգերի՝ գանձք կամ քարոզք կոչվող հավաքածուից՝ ՆՀԲ-ն վկայում է «Բայ ոմկ. Խիզարով կտրել. սղոցել» (ՆՀԲ, հ. 1, էջ 944): Հ. Աճառյանը բայը բխեցնում է *խիզար*՝ «մեծ սղոց»-ից՝ բերելով հայերենի մի շարք բարբառներում գործածվող տարբերակներ, այլև նշելով, թե բառն արդյոք «...կապ ունի՝ արս. .... arra «սղոց» բառի հետ»<sup>15</sup>: «Հայոց լեզվի բարբառային բառարանում» արձանագրված է միայն Բուլանը-խում գործառող *խզարտել*-ը՝ «սղոցելով կտրատել»<sup>16</sup> նշանակությամբ: Հարկ է նշել, որ արդի հայերենի բառարանները, հետևելով Ստ. Մալխասյանցին<sup>17</sup>, *խզարել*-ը վկայում են առանց որևէ օրինակի նշումի (ԱՀԲԲ, էջ 577, ԺՀԼԲԲ, հ. 2, էջ 515, տե՛ս նաև **Ա. Սուքիասյան**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., 1967, էջ 263):

### Ծիւ ծիւ անել

Հ. Աճառյանի հավաստմամբ՝ առանձին անգործածական «կտոր, պատառ (մանաւանդ շորի)» նշանակությամբ *ծիւ* արմատը «գտնուում է միայն արդի բարբառների մեջ», և *ծիւ ծիւ անել*-ը նա վկայում է միայն Ղարաբաղի բարբառում «պատառտել» իմաստով (ՀԱԲ, հ. 2, էջ 460-

<sup>12</sup> «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 2, Վենետիկ, 1836, էջ 604, «Առձեռն բառարան հայկազեան լեզուի» (այսուհետև՝ ԱԲ), Վենետիկ, 1865, էջ 681, **Ռ. Ղազարեան**, Գրաբարի բառարան (այսուհետև՝ ԳԲ), հ. 2, Եր., 2000, էջ 389-390:

<sup>13</sup> «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան» (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հ. 4, Եր., 1980, էջ 167, **Է. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), Եր., 1976, էջ 1186:

<sup>14</sup> Փակագծերում նշվում են ձեռագրահամարը և էջը:

<sup>15</sup> **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 2, Եր., 1973, էջ 364:

<sup>16</sup> «Հայոց լեզվի բարբառային բառարան» (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ. 2, Եր., 2002, էջ 318:

<sup>17</sup> Տե՛ս **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՄՀԲԲ), հ. 2, Եր., 1944, էջ 260:

461)<sup>18</sup>, թեև «Ղարաբաղի բարբառի բառարանում» հարադրական կազմությունն այդ իմաստով չի առանձնացվում<sup>19</sup>, այլ միայն նշվում է *ծիլ ծիլ անել*-ը՝ «ծիլերի՝ ծվենների բաժանել»<sup>20</sup>: Հարադրություններն առկա են նաև ՀԼԲԲ-ում, բայց, ցավոք, նրանում նույնպես չի նշվում, թե *ծիլ ծիլ անել* և *ծիլ ծիլ անել*՝ «պատահողով, մաս-մաս անել», իմաստները ո՞ր բարբառում են գործածվում (ՀԼԲԲ, հ. 2, էջ 408, 404):

### Տոռնը

ՄՄ 566 (266ա), 873 (210բ), 3110 (105ա), 6762-ում (121բ) ձեռագրերում *չուան*. *պարան*. *կառան*. *առասան*. (*եթէ բարակ է*) *սպասանդակ*. *լար*. *սպասում*. (*եթէ կաշեղեն*) *փոկ*. (*եթէ ի խոտոյ*) *կեմ*. (*եթէ յերկայթոյ*) *շղթայ*. (*եթէ կապ անասնոյ*) *երասան կամ երասանակ* ՆՇ-ն եզրափակում է *տոռնը* բառը<sup>21</sup>: ՆՀԲ-ն *տոռն*-ը վկայում է «Չուան. լար. կապանք. սիրոյ շղթայ. հաղբ. խեղդ» նշանակություններով (հ. 2, էջ 889, տե՛ս նաև ԱԲ, էջ 790. ԳԲ, հ. 2, էջ 568)<sup>22</sup>, ՄՀԲԲ-ն *տոռ*-ը նշում է իբրև «բարբառային բառ» «Չուան, որով կապում են շանը» իմաստով (հ. 4, էջ 443): Ըստ Հ. Աճառյանի՝ *տոռ*-ը «շան վզի կապ» իմաստով առկա է Բուլանըխի և Մուշի խոսվածքներում (ՀԱԲ, հ. 4, էջ 421): «Միջին հայերենի բառարանը» *տոռ*-ը իբրև «1. Պարան, չվան, թոկ: 2. Շղթա, կապանք»<sup>23</sup> արձանագրում է XVI դ.: Հայերենի բարբառախոս վայրերում, մասնավորապես՝ Ալաշկերտի, Մուշի, Վանի և Մոկսի (ըստ Ս. Ամատունու՝ նաև «Ռշտունցիք»), նույնպես գործածվում է առանց վերջնահանգ *-ն*-ի *տոռ*-ը՝ «թոկ, որով կապում են շանը»<sup>24</sup>, իսկ Խոտրջուրում՝ «բարակ թոկ» իմաստներով<sup>25</sup>: ՆՇ-ում առկա *տոռնը*, այսինքն՝ *ն*-ով վերջավորվող գրաբարյան բառերի՝ «գաղտնավանկ *ն*-ի առկայությամբ *ը* հավելվածականը ստանալը» (ինչպես՝ *սոկնը*, *ծոնգնը*) բնորոշ է Սյունիք-Գողթն-Արցախ տարածքին<sup>26</sup>: Հետևաբար ենթադրելի է ՁԲ-ի՝ այդ տարածքում

<sup>18</sup> Տե՛ս նաև Հ. Աճառեան, Հայերեն գաղափարական բառարան (այսուհետև՝ ՀԳԲ), Թիֆլիս, 1913, էջ 516:

<sup>19</sup> Արձանագրվում է միայն «ծվծվալ, ճովողել» իմաստը. (տե՛ս Ա. Մարգարյան, Ղարաբաղի բարբառի բառարան, Եր., 2013, էջ 318):

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 317:

<sup>21</sup> *Տոռն* բառն առկա է նաև *պախուրց. երասանակ. սասկետ* ՆՇ-ում (ձեռ. ձեռ. 873, 210բ. 3110, 160բ. 6762, 123բ):

<sup>22</sup> Տե՛ս նաև Ռ. Ղազարեան, Գրաբարի հոմանիշների բառարան (այսուհետև՝ ԳՀԲ), Անթիլիաս, 2006, էջ 661:

<sup>23</sup> Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան (այսուհետև՝ ՄՀԲ), Եր., 2009, էջ 764:

<sup>24</sup> Ըստ ՀԼԲԲ-ի՝ Վանի և Մոկսի բարբառախոս վայրերում նույն նշանակությամբ առկա է *տոռան* -ը. (հ. 6, էջ 221):

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղը, նաև՝ Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան (այսուհետև՝ ԱՀԲՈՒԲ), Վաղարշապատ, 1912, էջ 634:

<sup>26</sup> Տե՛ս Ա. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972, էջ 48 և Աղյուսակ 2-ը, Է. Աղայան, Մեղրու բարբառը, Եր., 1954, էջ 174, Կ. Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Եր., 1966, էջ 121: Եվ կրկին հարկ է արձանագրել, որ Ղարաբաղի բարբառին նվիրված աշխատանքներում բառը չի հիշատակվում:

կամ էլ այդ տարածքին պատկանող անձնավորության կողմից գրվելը կամ ընդօրինակվելը:

### Ջալ

ՄՄ 775 (72ա) ձեռագրում վերը հիշատակված՝ *չուան* հենաբառով ՆՇ-ն եզրափակում է *ջալ* բառը: ՀԼԲԲ-ում *ճավ* հնչյունական տարբերակը հղվում է *ճավիկ*-ին, որն էլ «խավարծիլի նման մի տեսակ բանջար» է՝ 10 սմ բարձրությամբ, «մեջը ծակ քաղցրահամ գոխ, որ թթու են դնում, ողորմակոթ», և ըստ ՀԼԲԲ-ի՝ գործածվում է Արարատյան, Նոր Բայազետի, Մուշի բարբառախոս վայրերում (հ. 3, էջ 374), ըստ ԱՀԲՈՒԲ-ի՝ *ճավ*-ն առկա է Մշո, իսկ *ճավիկ*-ը՝ Բուլանըլի, Շիրակի, Ապարանի բարբառախոս վայրերում (էջ 427)<sup>27</sup>: Բառարանները վկայում են նաև Վանում, Մոկսում գործածվող *ճոռ*-ը (տե՛ս նաև ՀԱԲ, հ. 1, էջ 377, ԱՀԲՈՒԲ, էջ 80, տե՛ս նաև ՀԼՀԲ, էջ 411): Այս առնչությամբ հարկ է անդրադառնալ Հ. Աճառյանի այն դիտարկմանը, որ վերաբերում է *բազուկ* բառին և ճակնդեղի պիտանի մասերի անվանումներին («արմատը՝ տակ, թևերը՝ բազուկ»): Հ. Աճառյանի հավաստմամբ՝ Վանի բարբառում առկա *ճոռ*-ը «...բուն նշանակում է «կիսախողովակաձև», բայց նաև «ճակնդեղի կոթերը», և դա, ինչպես նշում է Հ. Աճառյանը, «ձևից առնելով» է «այսպես կոչուած» (ՀԱԲ, ն. տ.): Կարելի է հավանական համարել և ենթադրել՝ քանի որ *ճավ-ճավիկ*-ը «պարան, լար» հիշեցնող «մեջը ծակ քաղցրահամ գոխ» է, ապա այդ նմանությամբ էլ ներառվել է ՆՇ, ինչպես նաև այն, որ *ճալ*-ը ՆՇ-ում *ջալ* ձևով է տրվել արևմտյան բարբառախոս որևէ վայրի արտասանությամբ:

### Փողպատ

*Օձի*<sup>28</sup> հենաբառով ՆՇ-ում (ՄՄ 566, 278բ. 775, 79բ. 873, 220 բ. 3110, 112ա. 6762, 130ա) առկա *փողպատ*-ը (ՄՄ 775 և 873 ձեռագրերում՝ *պողպատ* տարբերակով) ՆՀԲ-ն հղում է *փողպատ*-ին՝ արձանագրելով՝ «Փողպատ ասի ոմկ. որպէս *Օձիք. յազա...*» (հ. 2, էջ 953, տե՛ս նաև ԳԲ, հ. 2, էջ 604): ՄՀԲԲ-ն նույնպես «օձիք» նշանակությամբ *փողպատ*-ը համարում է բարբառային բառ (հ. 4, էջ 513): Ըստ ՀԼԲԲ-ի՝ բառն այդ իմաստով գործածվում է Վանի, Մուշի, Մալաթիայի, Սասունի, Շատախի բարբառախոս վայրերում<sup>29</sup> (հ. 7, էջ 23): ՄՀԲ-ն «օձիք» նշանակությամբ *փողպատ*-ի բնագրային օրինակներ է քաղում Ֆրիկի և Ն. Քուչա-

<sup>27</sup> Տե՛ս նաև՝ ՄՀԲԲ, հ. 3, էջ 205, Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հումանիշների բառարան (այսուհետև՝ ՀԼՀԲ), Եր., 1967, էջ 422:

<sup>28</sup> Գրաբարի անեզական որոշ բառերի՝ եզակի թվով գործածությունը լատինաբան հայերենի ձևաբանական համակարգում նկատվող երևույթ է (տե՛ս Լ. Հովհաննիսյան, XVII դարի գրաբարը, էջ 184, Վ. Համբարձումյան, Լատինաբան հայերենի պատմություն (14-18-րդ դդ.), Եր., 2010, էջ 269):

<sup>29</sup> ՀԼԲԲ-ում նշվում է նաև Մտու. համադրուագրությունը, որը, սակայն, բարբառախոս վայրերի ցանկում չի արտացոլված (տե՛ս հ. 1, էջ XIX):

կի երկերից (տե՛ս էջ 789): Արդի հայերենի բացատրական բառարանները *փոռկատ*-ը հղում են *փոռկատ*-ին՝ միաժամանակ առանց որևէ հղումի նշելով «օձիք» իմաստը (ԱՀԲԲ, էջ 1531, ԺՀԼԲԲ, հ. 4, էջ 669):

### Ծիրանի գօտի և աղեղն ամպոյ

*Ծիածան*<sup>30</sup> հենաբառով ՆՇ-ն կազմում են *աղեղն ամպոյ. ծիրանի գօտի* անվանական հարադրությունները (ՄՄ 566, 251բ. 775, 63բ. 873, 199ա. 3110, 93բ. 6762, 112ա): Ըստ Ա. Հանեյանի՝ *ծիածան* հասկացության բառագուգաբանությունները հիմնականում կազմում են երեք խումբ՝ *աղեղ(ն), գօտի, կանաչ-կարմիր* բառային սկզբնաձևերով, որոնք, ինչպես նշում է հեղինակը, իրենց բառակազմական ու հնչյունական տարբերակներով ընդգրկում են բարբառային երեք մեծ տարածք<sup>31</sup>: Ներկայացնելով *ծիրանի գօտի* բառագուգաբանության տարածական բնութագիրը (հայ բարբառների արևմտյան խմբակցության տարբեր բարբառախմբեր՝ Պուլսի միջբարբառախումբ, Կարինի բարբառի Ախալքալաքի, Ախալցխայի մի շարք խոսվածքներ, Համշենի միջբարբառախմբից (Աբխազիա) բազմաթիվ բնակավայրեր, Անտիոք՝ Քեսաբ, Սվեդիա) Ա. Հանեյանը հանգում է այն եզրակացության, որ «*ծիրանի գօտի* բառագուգաբանության ընդգրկած ենթատարածքը բավականաչափ ընդարձակ է, ցրիվ և զարմանալիորեն հատկապես ներառում է *ծովափնյա* հայ գաղթավայրերը...., ապա և ցամաքային բնակավայրեր»<sup>32</sup>:

Հատկանշական է, որ ԳՀԲ-ն վկայում է *ծիածան. աղեղն. իրիս* ՆՇ-ն (էջ 357):

*Աղեղն ամպոյ* հարադրության առնչությամբ կարելի է հավանական համարել, որ ձեռագիր բառարանի հեղինակը կամ գրչագիրն ընթրինակողը, հետևելով Սուրբ Գրքին (*ծիածան*-ը «ըստ սբ գրոց՝ ԱՂԵՂՆ ԱՍՏՈՒԾՈՅ» է, ՆՀԲ, հ. 1, էջ 1015) և քաջածանոթ սուրբգրային «Ձաղեղն իմ եղից յամպս: Իբրև գտեսիլ աղեղանդ՝ որ ձգի յամպս յաուրս անձրևաց» նախադասություններին (ՆՀԲ, հ. 1, էջ 37), *աղեղն Աստուծոյ*-ի նմանությամբ ստեղծել է *աղեղն ամպոյ* հարադրությունը:

Անշուշտ, քննվող բառերի քանակը (ընդամենը յոթ) որոշակի եզրակացությունների հնարավորություն չի ընձեռում, բայց և նույնանիշների՝ XVIII դ. ավանդված ՁԲ-ներում առկա հնչյունական տարբերակների քննությունից նկատելի է, որ դրանք մեծ մասամբ բնորոշ են Արևմտյան Հայաստանի բարբառախոս վայրերին:

**Բանալի բառեր** – *նույնանիշ, ձեռագիր բառարան, նույնանիշային շարք, բարբառ, բառիմաստ, հնչյունական տարբերակ*

<sup>30</sup> Տե՛ս Ա. Հանեյան, «Ծիածան» հասկացության բառագուգաբանությունների լեզվաաշխարհագրական բնութագիրը և հոգևոր-մշակութային արժեքը, «Երևանի մշակութային կենտրոնի 1600-ամյակին նվիրված գիտաժողովի», Եր., 2005, էջ 87-104:

<sup>31</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 87:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 95:

**НАЗИК ОГАНЕСЯН – Дialeктные явления в рукописных словарях синонимов XVIII века.** – В рукописных словарях синонимов, составленных в XVIII веке, некоторые синонимические ряды заканчиваются словами, свойственными диалектной речи. Эти слова рассматриваются в статье как интерполяции переписчиков; они пополняли синонимические ряды известными им диалектными словами. Рассмотрены, в частности, глаголы խզարել “пилить, отпиливать”, ծիւ ծիւ առնել “растерзать”, существительные տոռնը и ջաւ “канат; верёвка; шнур, нить”, փողպատ “воротник”, а также словосочетания ծիրանի գօտի и աղէղն ամպոյ “радуга”.

**Ключевые слова:** синоним, рукописный словарь, синонимический ряд, диалект, лексическое значение, фонетический вариант

**NAZIK HOVHANNISYAN – The Dialectal Phenomena in the XVIII Century Manuscript Dictionaries of Synonyms.** – In the manuscript dictionaries, some rows of synonyms end with words, which existed in the Armenian dialects. In this article these words are examined as interferences of the authors of the manuscript dictionaries; they replenished the rows and added some words of their own dialects.

The words խզարել “to saw off”, ծիւ ծիւ առնել “to tear to pieces”, տոռնը “rope, cord, thread”, ջաւ (id.), փողպատ “collar”, ծիրանի գօտի “iris, rainbow”, աղէղն ամպոյ (id.) are considered.

**Key words:** synonym, manuscript dictionary, row of synonyms, dialect, lexical meaning, phonetic variant